ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 75-Լ

«01» 10 2025թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Դավթի Սարգսյանին Տավուշի մարզի դատախազի պաշտոնին փոխադրելու և Նիկոլայ Գագիկի Բարսեղյանին Արագածոտնի մարզի դատախազի պաշտոնին փոխադրելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 29.09.2025թ.՝ համապատասխանաբար՝ N 417-Ա և N 418-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ  ե մ՝**

1. Կատարել Գ. Սարգսյանի կողմից՝ Արագածոտնի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ն. Բարսեղյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Գրիգորյան Լիլիթ - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Մաշադյան Հարություն - | Արագածոտնի մարզի դատախազի տեղակալ |
| Առաքելյան Ռուբեն - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |

Ղահրամանյան Մարուշ - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար

Մանուկյան Լիաննա - Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ

Մելիքյան Արմինե- Արագածոտնի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի հոկտեմբերի 20-ը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ — Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ